ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒՆՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի ***ավագանին որոշում է***

Հաստատել Գառնի համայնքի ավագանու 2019թ. հունվարի 20-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը

1. Գառնի համայնքի ղեկավարի 2019թվականի 4-րդ եռամսյակի բյուջեի կատարման եռամսյակային հաղորդումների ընդունումը:
2. Գառնի համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 16 թիվ 60-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ
3. Գառնի համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 16-ի N 63-Ա որոշման մեջ փոփոխություն կարատելու մասին
4. Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավարի սոցիալական աջակցության կամավոր լիազորությունների իրականացման և այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներդրման չափորոշիչները սահմանելու մասին
5. Գառնի համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 15-ի թիվ 51-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
6. 2019թվականի նոյեմբերի 15 –ի թիվ 48-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒՆՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019Թ. 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասով, *Ավագանին որոշում է՝*

Ընդունել ի գիտություն Գառնի համայնքի 2019թ. 4-րդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները համաձայն հավելվածի:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒՆՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3-Ն

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 N ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով բյուջեյում 71.475.121 դրամ հավելուրդի առկայությունը *ավագանին որոշում է*

1. Գառնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի «Գառնի համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատումը» թիվ 60-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածի 2451,2872,2951, 2911, 2823, 2111 տողը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

Հավելված

Կոտայքի մարզի Գառնի

Համայնքի ավագանու 2020թ հունվարի 20

N թիվ 3-Ն որոշման

Գառնի համայնքի 2019թ-ի բյուջեի փոփոխություն և վերաբաշխում կատարելու վերաբերյալ

Հազար.դրամ

Տողի համարը	Բաժին	Խումբ	դաս	Բյուջետային եկամուտների և ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հոդված	Ընդամենը	Փոփոխություն	Հաշված
				Ֆոնդային բյուջեի մնացորդ			+66475.121	66475.121
2 11.01.02	11	1	2	Պահուստային ֆոնդ վարչ. բյուջե		15200.0	+18000.0	33200.0
2491	04	9	1	Հողի իրացումից մուտքեր		5000.0	+5000.0	10000.0
				ԾԱԽՍԵՐ				
2 11.01.02	11	1	2	Պահուստային ֆոնդ վարչ. բյուջե	4891	25000.0	-18000.0	7000.0
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	5134	500.0	-50.0	450.0
2872	08	7	2	Հուշարձան և մշ. արժեք վերան.	5113	7700.0	+7800.0	15500.0
2872	08	7	2	Հուշարձան և մշ. արժեք վերան.	5134	300.0	+200	500.0
2951	09	5	1	արտադպրոցական կազմակերպություն	5113		+10850.0	10850.0
2951	09	5	1	արտադպրոցական կազմակերպություն	5134		+400.0	400.0
2911	09	1	1	Նախադպրոցական ուսուցում	5113		+59100.0	59100.0
2911	09	1	1	Նախադպրոցական ուսուցում	5134		+900.0	900.0
2823	08	2	3	Մշակույթի տներ/Ջեռուցում/	5129		+7700.0	7700.0

2823	08	2	3	Մշակույթի տներ/Ջեռուցում/	5134		+300.0	300.0
2111	01	1	1	Տանիքի վերանորոգում	5113		+2200.0	2200.0
2111	01	1	1	Տանիքի վերանորոգում	5134		+75.121	75.121

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«20» ՀՈՒՆՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4-Ա

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հանրային ծառայության մասին » օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ***ավագանին որոշում է՝***

1. Գառնի համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 16-ի «2020թվականի Գառնիի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատումը» N 63-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն որոշման N 4 հավելվածի 8-րդ տողի 3-րդ սյունյակում «պահակ բառը փոխել «Տնտեսվար» բառով և 9-րդ տողի 6-րդ սյունյակում կատարել փոփոխություն համաձայն հավելվածի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հոջորդող օրվանից:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.
ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԳԱՌՆԻԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը՝ 17

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Գառնիի Մարզամշակութային կենտրոն>> ՀՈԱԿ	Տնօրեն	Վարչական	-	1	146000			146300
2		Հաշվապահ	Քաղաքացիական	-	1	100000			100000
3		Գեղմասվար	Քաղաքացիական	-	1	100000			100000
4		Մեթոդիստ	Քաղաքացիական	-	2	92618			185236
5		Գրադարանի վարիչ	Քաղաքացիական	-	1	95164			95164
6		Գրադանավար	Քաղաքացիական	-	2	89611			179222
					1	92618			92618
7		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	2	89611			179222
8		Տնտեսվար	Քաղաքացիական	-	1	92618			92618
9		Խմբավար	Քաղաքացիական	-	2	92618			185236
					1	89611			89611
10					1	112618			112618
		Խմբավար	Քաղաքացիական		1	116402			116402
	Ընդամենը				17				1674247

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<20>> ՀՈՒՆՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10 հոդվածի 11-րդ կետով, 48 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ***ավագանին որոշում է***

1. Սահմանել Գառնի համայնքի ղեկավարի սոցիալական աջակցության կամավոր լիազորությունների իրականացման և այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներդրման չափորոշիչները՝

ա) Հաշմանդամ, կերակրողին կորցրած ընտանիքներին սոց օգնություն առավելագույն չափ սահմանել 150000 դրամ:

բ) զոհված ազատամարտիկների անապահով ընտանիքներին սոց օգնություն առավելագույն չափ սահմանել 400000 դրամ:

գ) Սոցիալական անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման համար յուրաքանչյուր բնակչի համար տրամադրել սոց օգնություն առավելագույն չափ սահմանել 100000 դրամ:

դ) Անապահով ուսանողների ուսման վարձի մասնակի մարման համար սոց օգնություն տրամադրելու առավելագույն չափ սահմանել 40000 դրամ:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«20» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6-Ն

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի 3-րդ մասի ***ավագանին որոշում է՝***

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2019թվականինոյեմբերի 15-ի «Գառնի Գեղարվեստի դպրոց», «Գառնի գյուղի մարզամշակութային կենտրոն», «Գառնիի երաժշտական դպրոց» և «Գառնիի Կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ների կանոնադրությունները հաստատելու մասին թիվ 51-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝
   Որոշման նախաբանում և հիմնական մասում շարադրված «գյուղ» բառերը հանել: Որոշման 1-ին և 3-րդ կետերում «Գառնի Գեղարվեստի դպրոց» և «Գառնիի Երաժշտական դպրոց» բառերից հետո լրացնել «արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն»: Որոշման 2-րդ կետում «Գառնի գյուղի մարզամշակութային կենտրոն» բառերից հետո լրացնել «Մարզամշակութային կրթադաստիարակչական հաստատություն բառերով:Որոշման նախաբանում «Գառնի» բառը փոխել «Գառնիի» բառերով
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«20» ՀՈՒՆՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7-Ն

2019ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15 ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի *ավագանին որոշում է՝*

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 15 նոյեմբերի 2019թվականի թիվ 48-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն որոշումը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20 ԹԻՎ 7-Ն ՈՐՈՇՄԱՆ

Գառնի համայնքի վարչական տարածքում 2020 թվականին տեղական տուրքերի, և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնիի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդմանթույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվություն համար.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առեւտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,<<Առևտրի և ծառայությունների մասինե>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների :

12) Գառնի համայնքի խորհրդանիշը (անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.

13) Գառնի համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման եւ (կամ) մատուցման թույլտվության համար.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար:

2.***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնիի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետեւյալ տեսակները***

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու եւ հաստատելու համար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի եւ շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար .

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաեւ աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.

9) համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների՝ (երաժշտական, Գեղարվեստի և մարզամշակութային կենտրոնի) ծառայություններից օգտվողների համար.

11) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար.

12) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար

13) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար:

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերն են .

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.:

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար կիրառելով 0.5 գործակից՝ 7500դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ կիրառելով 0.5 գործակից՝ 15000 դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար կիրառելով 0.5 գործակից՝՝ 25000դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ կիրառելով 0.5 գործակից՝25000դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար կիրառելով 0.5 գործակից՝ 50000դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար կիրառելով 0.5 գործակից՝ 1500դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար կիրառելով 0.5 գործակից՝ 2500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն կիրառելով 0.5 գործակից՝ 1500 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ կիրառելով 0.5 գործակից՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար կիրառելով 0.5 գործակից՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար կիրառելով 0.5 գործակից՝25000դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8300դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 2500 դրամ ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11600դրամ կիրառելով 0.3 գործակից՝3500դրամ

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 4500դրամ

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 6600դրամ

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 28000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 8400դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝46000դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 13800դրամ

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 8300դրամ կիրառելով 0.3 գործակից՝2500դրամ՝

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11600դրամ կիրառելով 0.3 գործակից՝3500դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 15000դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 4500դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝22000դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 6600դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 28000դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 8400դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝46000դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 13800դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար՝ կիրառելով 0.5 գործակից:

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000դրամ, կիրառելով 0.5 գործակից՝2500դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60000դրամ, կիրառելով 0.5 գործակից՝30000դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 300000դրամ, կիրառելով 0.5 գործակից՝150000դրամ

դ. խաղատների համար՝ 800000դրամ, կիրառելով 0.5 գործակից՝400000դրամ

ե. շահումով խաղերի համար՝ 400000դրամ, կիրառելով 0.5 գործակից՝200000դրամ

զ. վիճակախաղերի համար՝ 120000դրամ. կիրառելով 0.5 գործակից՝60000դրամ

10)համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 18000դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25000դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 40000 դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 600 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար1500 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 6000դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 12000դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000դրամ

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Գառնի համայնքի խորհրդանիշը (անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

2. *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝*

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝10000

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու նվարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ յուրաքանչյուր ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան 150 դրամ:

7) Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի համապատասխան՝ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝ Գառնի համայնքի ավագանին սահմանում է հետևյալ դրույքաչափերը՝

ՈՉ ԲԱՆԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ_ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ			
N	օբյեկտներ	օրենքով սահմանված դրույքաչափ	ավագանու կողմից սահմանված դրույքաչափերը
1	խանութներ	1մ² = 50-100 դրամ	1մ² = 50-100 դրամ
2	շուկաներ	1 մ² = 50-100 դրամ	1 մ² = 50-100 դրամ
3	հանրային սնունդ	1 մ² = 50-100 դրամ	1 մ² = 50-100 դրամ
4	բնակչության սպասարկում	1 մ² = 50-100 դրամ	1 մ² = 50-100 դրամ
5	հյուրանոցներ	1 մ² = 20-50 դրամ	1 մ² = 20-50 դրամ
6	այլ հասարակական շինություններ	1 մ² = 20-50 դրամ	1 մ² = 20-50 դրամ
7	արտադրական շինություններ	1 մ² = 5-15 դրամ	1 մ² = 5-15 դրամ
8	արդյունաբերական շինություններ	1 մ² = 5-15 դրամ	1 մ² = 5-15 դրամ
9	գրասենյակներ	1 մ² = 5-15 դրամ	1 մ² = 5-15 դրամ
10	կրթական հիմնարկներ	1 մ² =3-15 դրամ	1 մ² =3-15 դրամ
11	մշակույթի հիմնարկներ	1 մ² =3-15 դրամ	1 մ² =3-15 դրամ
12	առողջապահական հիմնարկներ	1 մ² =3-15 դրամ	1 մ² =3-15 դրամ
13	սպորտային հիմնարկներ	1 մ² =3-15 դրամ	1 մ² =3-15 դրամ
14	գիտահետազոտական	1 մ² =3-15 դրամ	1 մ² =3-15 դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ 2000 դրամ :

Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

9) համայնքային ենթակայության <<Գառնիի մանկապարտեզ >> հաճախող յուրաքանչյուր երեխայի 4000 դրամ ամսեկան :

10) Երաժշտական դպրոցում յուրաքանչյուր սովորողի համար 2500դրամ , նույն ընտանիքից երկուսից ավելի երեխաների հաճախման ժամանակ երրորդ երեխայի ուսման վարձը

սահմանել անվճար, երկու և ավել խմբակ հաճախելու դեպքում յուրաքանչյուրից գանձել սահմանված վճարի չափի 50%-ը :

11) Գեղարվեստի դպրոցում սովորողների համար 1000 դրամ

12) Մարզամշակութային կենտրոնում սովորողների համար՝ պար 2000դրամ, Կառատե -Դո Շոտոկան արևելյան մարտարվեստի 3000 դրամ

13) Ջրամատակարարման ծառայության դիմաց՝ ջրօգտագործող տնտեսությունների համար 1000 դրամ ամսեկան, ոչ կենցաղային նպատակով ջրօգտագործող տնտեսությունների և իրավաբանական անձանց մեկ մ³ ջրօգտագործման համար 500 դրամ:

14) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային կառողջապահական հաստատությունների, համայնքապետարանի վարչական շենքի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան տուրքի դրույքաչափ սահմանել կիրառելով կանխավճարային կտրոնային համակարգ՝

մինչև 12 տեղանոց թեթև մարդատար մեքենաների յուրաքանչյուր մեկ ժամվա համար 200 դրամ , մեկ օրվա համար՝ 1500 դրամ , մեկ շաբաթվա համար՝ 3000 դրամ, մեկ ամսվա համար՝ 15000 դրամ մեկ տարվա համար՝ 70000 դրամ , իսկ ավտոբուսների և բեռնատար ավտոմեքենաների մեկ ժամվա համար՝ 300 դրամ մեկ օրվա համար՝ 2000 դրամ, մեկ շաբաթվա համար 4000 դրամ մեկ ամսվա համար՝ 20000 դրամ , մեկ տարվա համար՝ 90000 դրամ:

15) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար:

16)համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝ 200 դրամ: